



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԸ. 1869 — ԳՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՅՈՒԼԻՍ

ՆՇՄԱՐԲ ԵՒ ՆՇԻԱՐԲ

Ի Հայաստան Աշխարհի.

(Տես էրես 161)

ԺԲ. Կարնոյ քաղաքը չհասած՝ արեւմուտքէն եկող կարաւանն վերջի իջեւանը կ'ընէ յիլիճաւ գեղը, որ թէ՛ այս բանիս համար, թէ՛ իր ջերմրկացն համար՝ գաւառին ամենէն մեծ և նշանաւոր գեղն կը սեպուի. ժամ մը հեռու է Գարարվայ հարաւակողմէն, Սեւ ջրին ալ հարաւային կամ ձախ կողմն է. քաղքէն 3 ժամ հեռի է դէպ հիւսիսային արեւմուտք: Անշուշտ իր տաք ջրերուն համար առած է այդ անունն, որ մեր եղկ և լոգ բառերուն ալ համաձայն և համանիշ կու գայ. մերայինք կլիճաւ ալ կ'ըսեն. և բանասէրք ոմանք կարծեն թէ Յունաց և Հռովմայեցւոյ ծանօթն է Ելիգիա անուամբ, ուր Տրայիանոս կայսեր հանդիպեցաւ մեր Արտաշէս Բ թագաւորն: Խորենացին կ'ըսէ միայն թէ Տրայիանոս Պարսից գէմ յարեւելս երթալու առնն, «աստ աճապարեալ Արտա-

շէս՝ (որ դադրեցուցեր էր Հռովմայեցւոյ հարկ տալը) մեծապէս ընծայիւք իջանէ ընդ առաջ նորա. զմեղանս 'ի յանձն առեալ՝ հանդերձ հարկօք անցելոց ամացն՝ լինի առաջինորա. և թողութիւն ի նմանէ գտեալ՝ դառնայ յաշխարհս Հայոց»: Իսկ յոյն և հռովմայեցի պատմիչք Արտաշիսի տեղ՝ Պարթամասիր կ'անուանեն Հայոց թագաւորը, և Ելիգիա ըսուած տեղը Եփրատայ քով՝ հանդիպած առ Տրայիանոս. ուսկից նախ ներումն խնդրեց հարկերուն համար, և կայսեր ձեռքով նորէն թագաւոր պսակուիլ. երբոր Հռովմայեցիք տհաճութիւն մը ցուցին կամ Արտաշէս-Պարթամասիր (գուցէ վարդանասար) այնպէս կարծեց, ինքն ալ քաջայանդուզն համարձակութեամբ մը տաւ Տրիպլիանու վրանը և իմացուց որ ինքը գերիի կամ յաղթուածի մը պէս չէր եկած կայսեր ոտքը, այլ հաստա-

տելու իր նախորդաց դաշնադրութիւնը, կատարելու պարտքը և ընդունելու պատիւը: Տրայիանոս ալ աւելի խրոխտաբար մերժեց զնա, ըսելով թէ Հայաստան Հռոմայեցւոց մարդ եղած է, որու որ ուզենք՝ անոր կու տանք թագը: Սակայն անշուշտ մտածելով որ եթէ իր ետեւէն թշնամի կամ տեգոհ աշխարհք մը թողու՝ Պարսից վրայ երթալու ատենը, շատ կը դժարանայ իր գործը, գոհացուց թագաւորը և Հայերը, պայման դնելով որ խաղաղութեամբ կենան տեղերին, և ինքն անցաւ գնաց ընդգէմ Պարթևաց: Ոչ շատ տարի վերջը (յամի 162) հոս նոյն Ելիզիայի քով վալաշ կամ վոլոգիս Պարթևաց թագաւորն՝ մեր Տիգրան Գ թագաւորին ժամանակակից և գուցէ նիզակակից, զարկաւ կոտորեց Հռոմայեցւոց բանակը՝ հանդերձ անոնց Սևերոս սպարապետան: Ուրեմն ոչ միայն վաճառական կարաւաններ՝ հապա նաև շատ զինուորական բանակներ անցեր և դադրեր են Իլիծայի քով, և իր տաք ջրերուն գոլոշեաց հետ՝ ծխեր են շատ արիւններ ալ: Ուրիշներէն զատ Սուլդան Մուրատ (Գ) ալ իր մեծ բանակաւ հոս դադրեցաւ գիշեր մը յամին 1635 (յուլիսի 2). իրմէ առաջ և վերջն ալ շատ հեղ Օսմանեանք ասոր մօտ մեծ բանակներ դրած են, ինչպէս յամի 1554, 1578, 1585, և այլն: Զերմուկին օգուտը և գործածութիւնը շատ հին ատեններէ ճանչցուած ըլլալն անտարաւոյս է. բայց առջի անգամ բաղանեաց չէնք շինելն հոն՝ Կարնոյ քաղքին շինող Անատոլ զօրավարին կ'ընծայուի. որ « և ի վերայ ջերմութեան աղբերացն յարկս ի վիմատաշ քարանց շինեաց », ըստ խորենացւոյն: Անատոլի դաստակերտ կարծուեցաւ և Իլիծայի մօտ Սև ջրոյ վրայ կամուրջն՝ Շամբին արևմտեան ծայրը. նոյն իսկ Շամբին մէջն ալ երբեմն կ'երևին սալայատակ ճամբու հետք, գուցէ աւելի հին ատեն շինուած: Անատոլի շինած վիմատաշ յարկերն և անկէ վերջը շինուած ութանկիւնի գմբէթն և նոյնաձև կճափայլ աւազանն ալ աւրուած են. հիմայ երկու են աւազան.

ներն կաւային կրաքարէ շինուած, մէկն արանց՝ միւսն կանանց սեփականած. առջինն մեծագոյն, 20 ոտք տրամագրծաւ, եզերքներն 4 1/2 ոտք խոր, մէջտեղն 6 ոտք. տաքութիւնն ինչուան 30 րէօ միւրի. ջուրն ծծմբային և ժանտահոտ չէ, այլ երկաթահամ և քիչ լեղի. որով շատ հաճոյարար և հանգստարար, և շատ առողջարար կը սեպուի. անոր համար նաև հեռու վիճակներէ խուռն բազմութիւն կը դիմէ այս հայկական Գարլսպատին, մանաւանդ ամառը, և վրաններով չորս դին կը բանակին: Անցեալ դարուն սկիզբներն մեծ ժաժէ մը կործանեցաւ Իլիծա իր բաղանեզքն. անկէ քանի մը տարի առաջ էր (1704) երբ մեծանուն Դուռնըֆոր բուսաբան ուղևորն հոս գիշեր մ'անցուց (14 յունիսի), և տեսաւ բաղանեաց ութանկիւնի գագաթը՝ բաց գմբէթն և ութանկողմն աւազանը. երկու աղբերաց ջրոյն համար ալ կը վկայէ որ մարդու մէջքի հաստութիւն ունին. ջրոյն և լոգացողաց համար ալ կ'ըսէ. *Cette eau est douce et d'une chaleur supportable. Dieu sait comme les Turcs y courent! ils viennent d'Erzeron s'y baigner; et la moitié de notre caravane ne laissa pas échapper une si belle occasion.*

ԺԳ. Կարնոյ դաշտը՝ թէ իր երկրին վերիվայրութեամբը, թէ ընդարձակութեան մէջ ցրուած չէնքերուն տեսուածքով, բարձր տեղէ մը նայողին՝ ծովու կերպարանք մը կ'ընծայէ, որուն ալեաց վրայ շարուած են մակուկաձև գեղերն. և իբրև անընթի խորշի մը մէջ՝ հարաւային արևելեան լեռանց անկիւնը քաշուած է մեծազանգուած նաւն, Կարնոյ նաւաքաղաքն. որուն բարձրածայր կայմն կամ կանթեղակիր աշտարակն է քէփսի-միւնսրէն, որ և շատ ժամերով հեռուէն կ'երևի. վասն զի արդէն քաղքին դիւքն բարձր է, բերդն և միջնաբերդն աստիճանաբար աւելի բարձր են. այս ետքինիս մէկ կողմէն ալ վեր կը բարձրանայ այն աշտարակն իր յատուկ 100 ոտք բարձրութեամբն. ձևը բոլորակ, երկու չափ (մեղր) տրամագծաւ, ներսէն

քարուկիր, դրսէն կանաչ աղիւսներով պատած, բռած ու փայլուն. գլուխն տախտակամած ավսէաձև. անոր համար քէփսի կոչուած. շրթունքը կարմիր աղիւսներու շարքով բարձրաքանդակ կամ դուրս ցրցած արձանադրութիւն մը ձևացուցած է արաբացի լեզուաւ, քիւֆի տառերով, Ապտիւլ Գասիմ տոհմէ Մուկաֆֆէր պէկ անուամբ կուսակալի մը, ժի դարու մէջ. գազաթը՝ իրեք ու կէս դար է՝ կը ծածանի օսման նեան լուսնանիշ դրօշը: Այս օղակտուր բարձրացեալ կայմաշտարակը տեսնողն՝ ի հարկէ կարնոյ ծովադաշտէն կը դիմէ անոր նաւաքաղաքը, որ արդէն գրեթէ 6000 ոտք բարձր է Պոնտոսի երեսէն, 100 ոտքի մը չափ պակաս քան զանուանի լեռնանցքն Մոն-Սընի և 40 քան զՍեմբլոնին, և նոյն չափ բարձր քան Սփիւկէն՝ որ Զուիցերիի և իտալիոյ միջի անցքն է: Այսպիսի բարձր դրիցն համար՝ ի հարկէ Պետրպուրկի պէս ալ ցուրտ կը զգայ իր զիւստմէ՝ մինչ իր աշխարհագրական դրիցն նկատմամբ պէտք էր ոչ միայն քան զի. Պոլիս և զՏրապիզոն տաք ըլլալ, այլ և աւելի քան զՀռովմ և զՆաբոլի. վասն զի ասոնցմէ ալ աւելի հարաւագոյն, կամ երկրիս հասարակածին մօտ է: Ուրեմն երկար և սաստիկ ձմեռ մ'ունի, բայց չոր և պայծառ օդով, սքանչելի բարեխառնութեամբ դարուն և ամառ մը, որ կանաչով, ծաղկներով, արմըտեօք և բանջարեղինօք կը զարդարեն կը վայելցընեն, և սիպերիական ամայութիւնը խտալական դրախտ մը կը դարձընեն: Մօտենանք անվախ և ահա մէկ բարձր կայմաշտարակին տեղ՝ կը սկսին հարիւրաւորք յերևան դալ, և ծովագոգի մը ծոց խռնուած նաւերու կերպարանք կ'առնու տեղին. — եթէ մօտիկ ջաղացքներուն բազմութիւնը, անխնւրուն այլանդակ դղորդմունքն և դարձուածքն, և ի պաշտպանութիւն քաղաքին՝ հողաբլրոց վրայ կանգնած տասնեակ և աւելի մարտկոցներ ու բաղ-

1 1855-6 ձմեռը ինչուան 28° Բէօմ. հասուցուրան:

խոցներն (Թապիս) ալ նկատես, հանդերձ բերդերուն կրկին պարիսպներով, 12 դռնաձև կամուրջներուն ձգուածովը (ճէպիւ գափուլար), արդարեւ մեծադիր, հիացուցիչ, տարօրինակ, նշանակերպ տեսարան մը կ'ելլէ հոն, զոր դիւրին չէ զանց ընել, թողուլ դառնալ:

Արդեօք որչափ հին դարերէ ընտրուած էր այս տեղս՝ կարնոյ քաղաքին, գաւառին, աշխարհին և բոլոր արեւմտեան Հայոց գլուխ ըլլալու, չեմ գիտեր. բայց ասկէ 1440 տարի մ'առաջ կայսրն Յուսայ ընտրեց այն տեղը իրեն բաժին ընկած Հայաստանի մայր և ամուր քաղաքն ընելու. անշուշտ Անատոլիայ շինած Թէոդուտոսիոսն հիմակուան բերդաքաղաքն է, բոլոր շէնքին արեւմտեան հարաւային կողմը՝ երկայն քառանկիւնի ձևով, և երկու կարգ պարսպով, որոց միջոցն Հիւսար-պիւէն կ'ըսուի. այս պարիսպներս որ 72 աշտարակներով կը կանգնին, ինչպէս Բիւզանդացոց շինած բերդաքաղաքներէն շատն, իրաւ շատ անգամ ծեծուեր, քակուեր, նորոգուեր են, բայց դեռ նախնական շինուածին մասն և ձևն ունին. որուն գլխաւոր նշանն էր՝ դրսուանց նաւացուկի նման ժայռերով կամ քարերով ցցուած ըլլալն, որ պէս զի թշնամեաց դիւրաւ մօտենալի և բռնելի չըլլայ. ինչպէս որ քաղաքին հիմերն ալ ներսէն դէպ ի դուրս փորած և մը բարձրացուցին, որ չկարենան նաղմափորք դիւրաւ հիմը գտնել և քանդել. արեւելեան և արեւմտեան երեսներուն աշտարակներն բոլորած և շինուցան, հիւսիսային և հարաւային կողմանցըն՝ գոգած և ժայռած և ահա թէ ասոնց և թէ պարսպաց ցցուած ցուկներուն համար՝ այն ատենն ալ Նաւաքաղաքին նմանութեամբ և կոյմամբ ճանչցուած էր քաղաքն կարնոյ: Բերդաքաղաքին արեւելեան հարաւային անկիւնն է միջնաքերդն (Իչ-գալէ) բարձր դիրքի վրայ, աւելի բարձրագոյն պարիսպներով, որոց հարաւակողմը կանգնած էր բարձրագոյն աշտարակն Թէոդուտոս անուամբ յանուն կայսերն, որոյ տեղ է հիմայ վերայի-

չեալ թէփսի մինարէն, և որոյ խարխալն կը ցուցնէ հին շինութիւնը: Բերդա-
քաղաքին չորս դին կը պատէ խոր խը-
րամ. անկէ դուրս կը տարածուին ա-
րուարձաններն, որ դրսուանց քաղաքին
հնգակողմն երեւոյթ կու տան, և երկու
երեք ժամ կը տևէ շրջապատելն. բայց
ասոնց չորս դին ալ խրամներ կան, ո-
րոնք վերոյիշեալ ճեպիռզափոշ կա-
մուրջներով ներս կը տանին. անկէջ ալ
ներս անցնելու համար ուրիշ կամուրջ-
ներ և չորս դռներ կը գտնես. ուր կը
հրաւիրեմ հետեւողս ներս մտնելու և պը-
տըտելու ու դիտելու, ինչ որ ինծմէ ա-
ռաջ շատերն նկատելու նկարագրեր են,
իրեւ մնացեալ նշանաւոր շէնք՝ այս հի-
մայնուաղեալ, բայց միշտմեծ քաղաքին:

Ի հարկէ դիտելի բաներէն պիտի ըլ-
լան ջիփտե-միւնարէն, թէփսիին մօտ,
իր ջուխտակ գեղեցիկ սիւնանման շեր-
տաձև կիսկատար աշտարակներովն,
կարմիր, կանաչ, կապոյտ, սև աղիւս-
ներով, քիւֆի գրով և պարսիկ լե-
զուով հին արձանագրութեամբ մը՝ գը-
րուած յամին ֆրիստոսի 962. — աշտա-
րակաց միջոց բարձրակամար և բազմա-
քանդակ դուռն իբր 30 ոտք բարձր.
կարգացողաց երկկարգ 40 սենեակ-
ներն. և անոնց ծայրն եղած տաճարա-
ձև իւնարէդ սենեակն կամ շիրիմն, ո-
րուն սքանչելի մանր քանդակներն քա-
կեր տարեր են Ռուսք՝ քաղաքն առած
ատեննին, յամի 1829: — Ուշուշաւի
մեծ մզկիթն, և մեծ շինուածն՝ 50 չափ
երկայնութեամբ և 40 լայնութեամբ,
եօթն կարգ սիւներով 28 կամարա-
սեանց վրայ, որոնց վրայ կ'ամբառնար
մեծ գմբէթ մը, իսկ հիմայ տախտա-
կով պատած է. 'ի սկզբան ինչ բանի
համար շինուած էր այս տեղս. ես չի-
մացայ: — Չիւնիլի-միւնարէ՝ երզնկայի
դրան մօտ, և անոր քով քարայէն Մուշ-
րո-սէրայ կամ Մուրրով տեղն, բազմա-
քանդակ դուռով մը, որուն համար ո-
մանք ըսին թէ Մուրրո անուամբ եղի-
տիի մը պալատ էր, որ իսլամը յանձն ա-
ռած ըլլալով սպանուեցաւ իրեննե-
րէն: — Թօփիւնէ, մեծ քառակուսի

շէնք մը, որ անշուշտ հին եկեղեցի մ'էր.
ինչպէս նաև մզկիթներէն շատն, որ
բերդաքաղաքին մէջ 30 հատ կան, իսկ
բոլոր քաղաքին մէջ ատենաբ 200 հատ
կը համրուէին: Շէն եկեղեցիք հիմայ
քիչ և նորաշէն են, մէկ մէկ հատ Հա-
յոց, մատուռ մը Յունաց, եկեղեցի մը
լատինացի կնկրդաւոր կրօնաւորաց: Ա-
սոնցմէ վերջը դիտելիք են վաճառանոց-
քն, կտաւանոցք, կարաւանատունք և
իջեվանք 40ի չափ, բաղնիքներ, բազ-
մաթիւ աղբիւրներ, գմբէթաւոր շիրիմ-
ներ, գործարանք զինուց, մորթեղի-
նաց, ձիու կազմածոց, պղնձէ ամաննե-
րու, և այլն: — Պարսպաց վրայ կ'երևին
տեղ տեղ մնացորդք յոյն և հայ արձա-
նագրութեանց, քանդակք և խաչվէմք,
բայց քիչ: — Պէտք չէ մոռնալ քանի
մ'ուխտատեղիներ ալ, որոց զլիսաւորն
է Սահակայ և Յովսէփայ հանգստարանն
Ուլուճամիին մօտ և անոնց Նահաւուսկի
աղբիւրն՝ զոր Ապոշ Սախ կ'անուանեն
մահմետականք, իրենց մէկ տանը մէջ
ըլլալով, Դավրիժու դրան մօտ. — Ս.
Թորոս, Ս. Միւնար և Քաւաւուշն մուս-
կունք, և այլն. Հայոց եկեղեցւոյն հին
Ս. Աստուածածին մատրան քով ալ կայ
Գէորդ Նահատակին գերեզմանն: Այս
մատրան քով էր կ'ըսեն հին եկեղեցին
ուր Եզր կաթուղիկոս Կարնոյ ժողովքն
ըրաւ յամին 632, Հերակլ կայսեր
հրամանաւ: Մահմետականաց պա-
տուած գերեզմաններէն 30 հատ մը կան
բերդին մէջ կոնաձև գմբէթներով,
քաղքէն դուրս ալ արեւելեան դրան
դիմաց՝ Կիւնիւշլիք գիւնդէք ըսուած-
ներն, որոց մէջ շատ գեղեցիկ էր մէկ
մը 15 ոտք բարձր, ութանկիւնի, փայ-
լուն քարերով, չորս կամարաւոր դռնե-
րով, բայց մէջը դատարկ և անխնամ
թողուած: — (Հոս անցողաբար պէտք
է զգուշացնեմ պտըտողը՝ քաղաքին մե-
ծամեծ շանց բազմութենէն, որը մանա-
ւանդ գիշերը շատ ահարկու են, կէս-
օրն ալ ականջ կը խլացնեն հաճմուն-
քով:) — Քաղաքին երեսէն և միջէն պա-
կաս զարմանալի չեմ կարծեր, գուցէ և
շատ աւելի՝ իր ներքին յատակն. որով-

հետև արտաքին շատ մաքուր է, և փողոցներն այլ բաւական լայն չեն. իսկ ներքին յատակ ըսելով՝ կ'իմանամ գետնին տակը, ուր հին քաղքին շինողք՝ անոր ամրութեան և պիտոյից համար ճամբաներ շինած էին, թէ ջուր բերելու, ինչպէս որ կը վկայեն աղբիւրներն ալ ինչուան հիմայ, թէ խոտ բերելու Շամբէն, և թէ զօրաց ելումըտի համար. — գուցէ այն շինուածոց մասնակից էին Կիւմիւշիւ գմբէթից քով եղած Սողան վէրան բլրին մէջ փորուածքն և բաւղաձև փողոցներն. որոյ քով կար հին մեծ շինուածք մ'ալ, որուն դռները իրենց հռոմէական արծուեաց քանդակներովը՝ թռուցին Ռուսաց արծուիններն մինչև Ֆինլանտիոյ ծովածոցը: Այս նոր արծուեաց աւերածէն ետև կարնոյ քաղաքն շատ նշագեցաւ շինութեամբ և բնակութեամբ. այն պատերազմէն առաջ 20,000 տուն մահմետական կար, 3500 տուն Հայ. ատենգը ինչուան 40000 տուն բնակիչ կը յիշուի, հիմայ այն տուներուն թուով են բնակիչքն, կամ քիչ աւելի. ըստ ոմանց 70,000՝ կ'ելլեն բոլոր բնակիչքն. որոցմէ մեր ազգայնոց թիւն 5000՝ չափ ըլլայ: 20 տուն մ'ալ Բուրայ կայ, որը թէ և մէկալ անծանօթ բոշայից ցեղակից կ'երևան, բայց բարեկիրթ են և քրիստոնեայ, և Հայոց սովորութեանց և լեզուին հետևողք:

Քաղքիս պատմական անցքերն և դիպումներն, որոց վրայ չէի կրնար չմտածել, կը թողում ուզողին կամացը, քըն նել և խորհրդածել: — Բնական գիպուածոց մէջ նոր հանգիպածն (1859) մեծ ժաժն է, որ մասամբ կերպարանափոխ ըրաւ քաղաքը. քաղաքականաց մէջ անկէ քիչ առաջ նորէն Ռուսաց հետ պատերազմի վախով աւելցուցած նոր ամրութիւններն. իսկ հիմայ Սեւ ծովու ճամբուն շինութիւնն և Էրզրումի նորէն Ոսմանեան մեծ կողմնակալութեան մը գլխաւոր քաղաք անուանիլն՝ կը յուսացընէ նոր ոյժ և շարժումը տալ կարնոյ քաղքին, որ 14 կամ 15 դարէ վեր՝ յառաջակողմեան Ասիոյ շարժմանց կենդրոններէն մէկն եղած է, թէ պատե-

րադմական, թէ վաճառականական, թէ քաղաքական և թէ ճանապարհական հաղորդութեանց նկատմամբ. անոր համար ալ ոչ միայն մեծ մթերանոց է վաճառաց, ամուր զօրանխտ, այլ և աթոռ եւրոպական տէրութեանց երեսփոխաններու: — Ամեն տարի արևմուտքէն՝ Եւրոպայի վաճառքներով, արևելքէն՝ Հընդկաց և Պարսից վաճառքներով՝ իւրաքանչիւր գոնէ 100 միլիոն ֆրանգի գնով՝ կարաւաններ կու գան, կը կենան կ'անցնին Կարինէն. քիչ մաս մը հոն թողլով, և մաս մ'ալ անոր հայթհայթած կամ մեր աշխարհէն ժողոված վաճառքներն առնելով. որոնց գլխաւորներն վերը յիշեալ ձեռագործներէն զատ՝ են երկրին բերքն. և նախ ոչխարաց և արջառոց հօտերն. տարուէ տարի 100,000 թանձրադմակ և պարարտ ոչխար կ'ելլեն կարնոյ վիճակէն դրկուելու՝ ի ֆ. Ասիա. նաև ապխտած և աղած միսն Էրզրումի անուանի վաճառքներէն մէկն է. ինչպէս նաև անոնց մորթն և մուշտակն, զոր աւելի դէպ ի վրաստան կը խաւրէ. իսկ կաշին և անով շինած կարմիր կօշիկները, զէնքեր և զգեստեղեններ՝ իր շրջակայ գաւառներուն. Եւրոպայէն ընդունած լաթեղէնները, ինչպէս նաև Բիզէի կտաւը՝ կը խաւրէ ինչուան ի Մուսուլ և ի Պաղտատ. գլխոր և չոր պըտուղ՝ (ինչպէս նուշ) ինչուան ի կ. Պօլիս: Մեր աշխարհին զանազան կողմերն ալ իրենց քիչ շատ բերքովը հարկատու են կարնոյ. Տայոց գաւառքն կ'ընծայեն իրեն թարմ պտուղներ. նոյնպէս Երզնկայ ալ, հանգերձ խաղողով և լուբիալով. — Մուշ կը մատակարարէ երկու փափկութեան նիւթ, գինի և ծխաւոյս. — Բաղէշ՝ գլխոր և դեղին մում, մեղր ազնիւ, չոր պտուղներ, բուրդ և ստե. — Խարբերդ՝ ազնիւ գինի և այծու ստե. — Կիւմիլի՝ ասոր, բամբակ, դոմշու կաշի. — Ամիդ՝ նուշ, գլխոր, այծենի, կտաւ, մետաքսեղէն: — Հեռուանց՝ Հալէպ կը խաւրէ խատուտիկ կտաւներ. Մուսուլ՝ ասոր. Բաղտատ՝ արմաւ, մորթ, մարգարիտ. — Պարսկաստան՝ շերամ, մետաքս, գլխոր, քրքում, բամբակ, շալ,

թօմայէքի, աիիոն, և այլն, և այլն: — Անշուշտ զարգացուցիչ կամ զարթուցիչ ձեռաց ցնցմամբ և ուղղութեամբ կըրնայ կարնոյ քաղաքն շատ աւելի բարձրանալ, հարստանալ և յառաջադիմել ի քաղաքականութեան, և կատարել այն պարտքը կամ յոյսը, զոր վերին Տեսութիւնն թողուց իրեն, երբ մի առ մի ջնջեց իր առջեւն զԱրտաշատ,

Դուին, Արծն, Անի, Զուղա, որոց միայն աւերակներն կը մնան վկայ իրենց անցեալ մեծութեանը. իսկ կարին որ անոնց ոմանց կանգնիլը և ամենուն առինկնալը տեսաւ՝ դեռ կանգուն է, և մայրաքաղաքութեան պատիւը կը պահէ 1450 տարիէ:

Կըշարունակուի:

ԼԱՄԱՐԴԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ

ԱՌ ԲԱՐԵԿԱՄՆ ԻՄ ՏԸ ՌԻԻՏԷՐ¹

Եւ տեսեր դու ըզնա ըզհուսկ վերջին մի նըւագ,
Խուլ, տրժգոյն, անկենդան, զուրկ 'ի շընչոյն, անբարբառ.
Եւ հիկէն նըկարիչ սիրողաբար ծըրադրէ
Ըզգիծս համօրէն գեղատեսիլ աւերաց,
Նըստեալ առ անկողնոյն, հանդէպ մեծի օրհասին,
Հաստատուն և վարժ գըրչաւ, ոչինչ հարեալ 'ի դողդոջ,
Սըրաթուի իբր ըզժամ, չե տակաւին բընութեան
Խանգարեալ զերեսացն ազնըւակերպ յօրինուած,
Առ մեղ ճեպեցեր դարձուցանել ըզնոսին,
Ըզպատկեր մի գոնեայ յափըշտակեալ յոչընչէն:
Թողեալ բիրտ արուեստին լուսանըկար պատկերի
Ըզգաղտնիս 'ի խաթարել համայն ըզմահ և ըզկեանս.
Դու ոչ զաստուծոյն անպատուեցեր ըզբազին,
Եւ ոչ աւերեցեր ըզգեղ անմահ քերդողին:

Ինքն ահա. միշտ գեղեցիկ. պերճապայծառ այն դիմաց
Ճըշգրիտ աւագիկ ծիրք, գիծք երեսաց վայելուչ,
Բայց և՛ ըս նըրբագոյն անօսրացեալք յօրհասէն:
Երևի նա չիջեալ խաղաղութեամբ՝ անաշխատ.
Տաղնապք երերականք դըժուարամահ վախճանի
Չեն եղծեալ ամենեկն ըզգեղ պայծառ իւր դիմաց.
Եւ հասեալ մեղմաբար մինչև 'ի շունչ իւր վերջին,
Նիրհեաց նա անշուշտ յերեկորին՝ զերդ մանուկ:
Հանգիստըն վեհագոյն և այն անդոյր խաղաղիկ
Նըկարին յայտանըկատ 'ի քո չըքնաղ պատկերիդ.
Յիշատակ սըրտառուչ, նըկարագիր հուսկ վերջին,
Ուր չգիտեմ որպիսի խաղաղութիւն և հանգիստ

1 Պ. Տը Ռիւտէր՝ անմիջապէս Լամարգիւնի մեռնելէ ետև նկարած նշանաւոր ծրագիր մը 'ի ըլլա նըծայեց. այս ծրագիրը այնչափ աւելի յարգի է, որչափ որ հարկաւորապէս միակ ծրագիրն է և պիտի ըլլայ: